ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/17, 23.04.2019թ.

Բողոք բերողանձ՝ «ԱյԹի 365» ՍՊԸ

Պատվիրատու ՀՀ վարչապետի աշխատակազմ

Ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-19/4 ծածկագրով գնանշման հարցում

Գնման առարկա Համակարգչային տեխնիկական օժանդակման ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

Դադարեցնել ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-19/4 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի կողմից կայացված N3 արձանագրության 2.1 կետով և N4 արձանագրության 2.1 և 2.2 կետերով որոշումները:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՆԻՍՏԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

• 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

• 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ք. Երևան

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
Հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող.1

Բողոք բերող անձ՝
Տեօրեն Տիգրան Նազարյան
«ԱՅԹԻ 365» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ահարոնյան փող., շ. 2, հարկ
Էլ. փոստ՝ it365.am@gmail.com
Հեռ: +37496535842

***Պատվիրատու՝** ՀՀ վարչապետի աշխատակազմ*
***Հասցե՝** ՀՀ, Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1,*

***Գնման ընթացակարգի ծածկագիրը՝** ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-19/4*
Գնման ընթացակարգի առարկան՝
համակարգչային տեխնիկական օժանդակման ծառայությունների ձեռքբերում

Բ Ո Ղ Ո Ք

1. **Բողոքի առարկան**

Սույն թվականի մարտի 19-ին համակարգչային տեխնիկական օժանդակման ծառայությունների ձեռքբերման նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի /այսուհետ՝ Պատվիրատու/ կողմից հայտարարվել է ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-19/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի շրջանակներում մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման ընթացքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությամբ ամրագրված սկզբունքները, այն է՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, ինչի արդյունքում խախտվել է մեր ընկերության շահերը և ընթացակարգի շրջանակներում հաղթող է ճանաչվել «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը:

2. **Բողոքի փաստացի և իրավական հիմքերը**

2.1. Պատվիրատուի կողմից սույն թվականի մարտի 19-ին հրապարակված ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-19/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետ՝ Ընթացակարգ/ հրավերի 1-ին մասի 5-րդ /հայտի գնային առաջարկը/ կետի 5.2-րդ ենթակետում ի տարբերություն ՀՀ ֆինանսների նախարարի կողմից հաստատված հրավերի օրինակելի տարբերակի աստղանիշով ավելացվել է հետևյալ նախադասությունը.

ՄՈՒՏՔ N Մ-1831Վ-13
23. 04 .. 18

- **«Գնային առաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել մեկ ամսվա կտրվածքով մատուցված ծառայությունների հաշվարկով»**, իսկ Ընթացակարգով ներկայացված պայմանագրի նախագծի N 1 հավելվածում՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում կրկին անգամ նախատեսված է պահանջ, որպեսզի գնային առաջարկները ներկայացվեն մեկ ամսվա կտրվածքով մատուցված ծառայությունների հաշվարկով, մինչդեռ Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի /այսուհետ՝ Հիմնադրամ/ կողմից հայտով ներկայացված գնային առաջարկը ներկայացված է ութ ամսվա հաշվարկով: Չնայած վերոգրյալ հանգամանքներին Պատվիրատուն Հիմնադրամի կողմից ներկայացված գնային առաջարկը գնահատել է բավարար, ինչը հակասում է.

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասին, որով սահմանվում է, որ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Տվյալ դեպքում ակնհայտ է, որ Հիմնադրամը չի պահպանել Ընթացակարգի հրավերով սահմանված՝ գնային առաջարկները մեկ ամսվա կտրվածքով ներկայացնելու պայմանը.

- ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 41-րդ կետին, համաձայն որի.

- *«41. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:»:* Վերը նշված իրավանորմի վերլուծությունից ակնհայտ է, որ Հիմնադրամի կողմի ներկայացված հայտը ենթակա էր մերժման, քանի որ օրենսդրությունը չի ենթադրում դրանում շտկում կատարելու հնարավորություն.

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ամրագրված սկզբունքներին, այն է՝ *գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը*: Տվյալ պարագայում Ընթացակարգի երկու մասնակիցների նկատմամբ կիրառվել է խտրական մոտեցում, մասնավորապես Հիմնադրամին ընձեռվել է հնարավորություն ներկայացնելու հրավերի պայմաններից տարբերվող գնային առաջարկ: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ Ընթացակարգի հրավերով սահմանված չի եղել ծառայության ձեռքբերման կոնկրետ ժամանակ և մեր ընկերությունը առաջարկել է մեկ ամսվա համար մատուցվելիք ծառայության համար արժեքը նկատի ունենալով, որ ծառայության մատուցման ժամկետը կարող է մեկ ամսից մինչև ութ ամիս տևել: Իսկ Հիմնադրամն իր գնային առաջարկը ներկայացրել է ընդհանուր թվով՝ ութ ամսվա հաշվարկով: Եթե մեր ընկերությունը ենթադրեր, որ հնարավոր է կոնկրետ ժամանակահատվածի համար հաշվարկել գին, ապա հնարավոր է մեր կողմից ներկայացված գնային առաջարկը այլ լիներ:

3.Բողոքի պահանջը.

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ.

1. Դադարեցնել *ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի կողմից կայացված՝ N 3 արձանագրության 2.1-կետով և N 4 արձանագրության 2.1-րդ և 2.2-րդ կետերով որոշումները:*

Կից ներկայացնում եմ.

1. Տուրքի վճարման անդորրագիրը.
2. ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-19/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարությունը.
3. ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստերի N N 3 և 4 արձանագրությունների պատճենները.
4. Անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

Բողոքը ներկայացնող անձ՝ .....

«ԱՅԹԻ 365»
"АЙТИ 365"
"IT 365"
00192202

23.04.2019թ.